

Ինչ անել եթե ձեր տնտեսությունում կամ համայնքում գրանցվել է ինֆեկցիոն հիվանդության դեպք

Ցանկացած ինֆեկցիոն հիվանդության բռնկման դեպքում՝ հիվանդության հետագա տարածումը կանխելու նպատակով, իրականացվում է անապահով կետերի կարանտինացում կամ սահմանափակում:

Կարանտինացումը սովորաբար անց է կացվում այն հիվանդությունների դեպքում, որոնք արագ տարածվում են և/կամ վտանգ են ներկայացնում մարդկանց առողջության համար: Կարանտինացումը իրականացվում է մեծ մասշտաբներով (օրինակ՝ մեկ համայնքում հիվանդության հայտնաբերման դեպքում կարանտինացման մեջ են ներառվում նաև մոտակա համայնքները): Կարանտինացումը իրականացվում է սովորաբար պետության կողմից:

Սահմանափակումը իրականացվում է ավելի փոքր մասշտաբով՝ ներառում է միայն տվյալ համայնքը և վերահսկվում է անասնաբույժի կողմից:

Անկախ պետության կողմից իրականացվող քայլերի, յուրաքանչյուր ֆերմեր պետք է իրագեկ լինի ինֆեկցիոն հիվանդության օջախի հայտնաբերման ժամանակ ձեռնարկվող քայլերի մասին.

1. Ցանկացած ինֆեկցիոն հիվանդության կասկածի դեպքում անհապաղ հայտնեք համայնքային անասնաբույժին:
2. Անասնաբույժ մասնագետների օգնությամբ իրականացրեք հիվանդության տարածումը կանխարգելող միջոցառումներ:

Եթե ձեր համայնքում կամ տարածաշրջանում գրանցվել է թեկուզ մեկ կենդանու վարակվածության դեպք, ապա ձեր անասնազվաքանակը ևս կարող է վարակվել: Ձեր ֆերմայում հիվանդության տարածումը կանխարգելելու համար ձեռնարկեք հետևյալ քայլերը.

- խորհրդակցեք ձեր համայնքային անասնաբույժի հետ,
- հիվանդ կենդանիներին մեկուսացրեք և բուժեք (եթե բուժվում է),
- վակցինացրեք կլինիկապես առողջ կենդանիներին (եթե կա վակցինա)՝ հնարավորին չափ բացառելով շփումը այլ տնտեսությունների հետ,
- սահմանափակեք ֆերմայի շարժը՝ անասունների, անասնակերերի և այլ անասնապահական առարկաների տեղափոխումը ֆերմայից դուրս:
- Ուշադրություն դարձրեք, թե որտեղից եք ձեռք բերում անասնակեր (արդյոք տվյալ ֆերմայում ինֆեկցիոն հիվանդության դեպքեր չկան),
- արոտային շրջանում օգտագործեք վարակի օջախից հեռու գտնվող արոտավայրերը,
- ֆերմայում անցկացրեք հարկադիր և պրոֆիլակտիկ ախտահանություններ (տես աղյուսակ 4),
- ֆերմայի մուտքերի մոտ դրեք ախտահանիչ գորգեր (օրինակ՝ լցրեք մուտքի մոտ թեփ կամ ծղոտ և վրան լցրեք ախտահանիչ լուծույթ),

- վարակված անասնակերը օգտագործեք միայն տնտեսության ներսում, նրանով կերակրեք վակցինացված անասուններին, իսկ առավել ապահովության համար՝ վառեք:
- կենդանու սպանողը և դիակների ոչնչացումը իրականացրեք անասնաբույժի հսկողությամբ:
- եթե որոշել եք ձեռք բերել անասուն.
 - հետաքրքրվեք, թե տվյալ համայնքում արձանագրվել է ինֆեկցիոն հիվանդություն, թե ոչ,
 - պարտադիր իրականացրեք բրուցելյոզի և տուբերկուլիոզի դեմ ախտորոշիչ ստուգումներ,
 - խորհուրդ է տրվում նոր բերած կենդանուն 14-21օր պահել առանձին (քանի որ կենդանին ձեռք բերելու ժամանակ հիվանդությունը կարող է գտնվել գաղտնի շրջանում և չարտահայտվել: Ու այդ պարագայում, եթե կենդանին պահվի մնացածի հետ, կարող է դառնալ վարակի տարածման պատճառ):